ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«12» 02 2024 թ. N 02/9S/7917-2024

«ՋԻՔԵՅ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԿԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
(ք. Երևան, Ռոստոմի 29, բն.166, հեռ. +374 98 03 29 03)

Ծանուցում

Հարգելի՛ տիկին Սարգսյան,

Միասնական սոցիալական ծառայության և «ՋԻՔԵՅ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության միջև 26.12.2023թ. կնքված թիվ ՄՍԾ ԳՀԾՁԲ-24/1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ՋԻՔԵՅ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը խախտել է Կողմերի միջև կնքված Պայմանագրի 7.13-րդ կետով սահմանված պահանջը՝ համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալուց հետո, տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին չի ներկայացրել համաձայնագրի հաստատված օրինակները:

Հիմք ընդունելով Պայմանագրի 7.13-րդ կետը՝ Միասնական սոցիալական ծառայությունը 2024 թվականի փետրվարի 12-ին միակողմանի լուծել է Միասնական սոցիալական ծառայության և «ՋԻՔԵՅ ՔՈՆՍԹՐԱՔՇԸՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության միջև 26.12.2023թ կնքված թիվ ՄՍԾ ԳՀԾՁԲ-24/1 գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը և մասնակիցը հրավերով սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրի և որակավորման ապահովման գումարը:

Հրավերի 8.14 կետի համաձայն՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ, եթե մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Միաժամանակ Միասնական սոցիալական ծառայությունը պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ձեր կողմից տուժանքի ձևով ներկայացված

Երևան 0010, Նալբանդյան 13, հեռ.՝ (374 60) 65 40 75
info@socservice.am , www.socservice.am

որակավորման և պայմանագրի ապահովումները և կից պահանաջագրերը կներկայացնի նաև Ձեզ սպասարկող բանկին և բանկի կողմից վճարումն ամբողջությամբ ապահովելու դեպքում ևս պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազորված մարմին:

Հայտնում եմ նաև, որ վերը նշված գործողությունների՝ վճարումների չիրականացման դեպքում պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

2/12/2024

X

ԱԳՆԵՍԱ ԱՂԱԲԱԲՅԱՆ

Signed by: AGHABABYAN AGNESA 8004770010

Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

Կատարող՝ Գ. Ջանջուղազյան
Հեռ. 060 654066